ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
ՀՀ ԿԳՄՍ «ՄԱՐՏՈՒՆՈՒ Տ.ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ «ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՄԵՋ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆՈՒԹՅՈՒՆ,ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆ,ԵՎ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ԱՌԱՐԿԱՅԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՏԱՐԲԵՐԱԿՎԱԾ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԻՋՈՑՈՎ»

ԱՆՑԿԱՑՄԱՆ ՎԱՅՐԸ՝ ՄԱՐՏՈՒՆՈՒ Տ.ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀԱՍՄԻԿ ԲԵՅԲՈՒԹՅԱՆ
ՈՒՍՈՒՑԻՉ՝ ՆՈՒՆԵ ՊԵՏՐՈՍՅԱՆ
ԴՊՐՈՑ՝ ՄԱՐՏՈՒՆՈՒ N2 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ

ՄԱՐՏՈՒՆԻ 2022

Բովանդակություն

1. Ներածություն

2.1. Շերտավորված կամ տարբերակված ուսուցման նկարագիրը

2.2. Ուսուցչի դերը շերտավորված ուսուցման մեթոդի ժամանակ

2.3 Տարբերակված ուսուցման տեսակները

3.Փորձարարական հետազոտություն.

3.1 Փորձարարական դաս-1

3.2Փորձարարական դաս-2.

4.*Վերլուծություն*

4.1 Գրականություն ցանկ

5.ՀԱՎԵԼՎԱԾ

5.1Դասապլան 1

5.2Դասապլան 2

1. Ներածություն

Յուրաքանչյուր աշակերտի ուսման նկատմամբ հետաքրքրություն առաջացնելու, ակտիվացնելու և խթանելու համար, կիրառվում են տարբեր հնարներ, միջոցներ ու մեթոդներ: Դրանք կարող են լինել ավանդական, ժամանակակից մեթոդներ, կան դրանց միաժամանակյա և խառը կիրառումը:

Կիրառվող մեթոդ կամ մեթոդները պետք է ապահովեն կրթության շարունակական զարգացում ու խորացում:

Յուրաքանչյուր ուսուցիչ պետք է տիրապետի որոշակի հնարքների և մեթոդների, որպեսզի սովորողին տա այն նվազագույն գիտելիքները, որը պահանջում է այս կամ այն առարկայի չափորոշիչն ու ծրագիրը:

Կարևորելով ուսուցչի իմացությունը՝ տիրապետելու որոշակի հնարքների և մեթոդների, որպես սովորողների գիտելիքների, հմտությունների ու կարողությունների խթանող, ես որոշեցի իմ հետազոտական աշխատանքի թեման ընտրել տարբերակված կամ շերտավորված ուսուցումը՝ որպես սովորողների առաջադիմությունը խթանող և բարձրացնող մեթոդ:

«Շերտավորված ուսուցումը, ուսուցման այն տեսակն է, որի ընթացքում առանձնացվում են նրա առաջատար ձևերն ու թեքումները»:[1]

Ներկայումս ուսուցման ոլորտում կան բազմաթիվ խնդիրներ, որոնցից յուրաքանչյուրը ունի իր պատճառները:

Ուսուցման ոլորտի հիմնական խնդիրներից են.

ա) Սովորողների պասիվ մասնակցությունը դասապրոցեսին:

բ) Դասարաններում տարբեր կարողությունների և առաջադիմությունների սովորողների ներկայությունը:

գ) Սովորողների մոտ հանդուրժողականության և մեկը մյուսին օգնելու կարողությունների պակասը կամ բացակայությունը:

Տարբերակված ուսուցման նպատակներն են

ա) Ունեցած գիտելիքների ամրապնդում:

բ) Նոր գիտելիքների, կարողությունների և հմտությունների ձեռք բերում:

գ) Հանդուրժողականության և փոխօգնության ձևավորում:

---

[1] Ա. Նալչաջյան, «Հոգեբանական բառարան», Երևան 1984 թ., էջ 240:

Ունենալով վերը նշված նպատակները ցանկանում եմ ինչքան հնարավոր է ուսուցման ոլորտի խնդիրները հասցնել նվազագույնի, իմ մանկավարժական գործունեության ընթացքում:

Գրական ակնարկ.
2.1. Շերտավորված կամ տարբերակված ուսուցման նկարագիրը

Տարբերակված ուսուցման նպատակն է յուրաքանչյուր սովորողի համար ապահովել պայմաններ՝ ըստ նրա ընդունակությունների, ձգտումների, պահանջմունքների, զարգացման համար: Տարբերակված ուսուցումը թույլ է տալիս ուսումնառությունը կազմակերպել՝ ելնելով սովորողի անհատական որակներից: Այս մեթոդի նպատակն է, որպեսզի բոլոր սովորողները յուրացնեն կրթության գոնե նվազագույն գիտելիքներ, որևէ կամ տվյալ կոնկրետ առարկայից:

Տարբերակված ուսուցման ժամանակ հաշվի է առնվում սովորողների անհատական առանձնահատկությունները:

Շերտավորված կամ տարբերակված ուսուցման ժամանակ ստեղծվում են խմբեր: Յուրաքանչյուր խմբում ընդգրկվում են նման առաջադիմության, ձգտումներով և տրամաբանությամբ սովորողներ: Այսինքն խմբերը տարբերվում են իրենց գործունեությամբ, նպատակով, ուսուցման խորությամբ և վերջնարդյունքով:

Տարբերակված ուսուցումը իրականացվում է երեք հիմնական փուլերով.

ա) սովորողի անհատական առանձնահատկությունների ճանաչում,

բ) սովորողների խմբերի բաժանելը ըստ անհատական առանձնահատկությունների,

գ) տարբերել յուրաքանչյուր խմբին տրվող ուսուցման նյութը:

Տարբերակված ուսուցման ժամանակ կարելի է առաջադրանքները կամ ուսուցման նյութը տրամադրի ուսուցիչը: Ցանկալի արդյունք է տալիս նաև այն ձևը, երբ սովորողը ինքն է ընտրում իր կողմից յուրացված նյութը, եթե խմբում ընդգրկված են ցածր կարողություններով կամ դասապրոցեսին դժվար ինտեգրվող սովորողներ:

Ես դասարաններում խմբերը ձևավորվում եմ ըստ աշակերտների թվի, մինչև 20 աշակերտ ունեցող դասարանը՝ երեք խումբ, քսանհինգից երեսուն աշակերտը՝ չորս խումբ, երեսունից ավել՝ հինգ խումբ:

Ցածր կարողության խմբերին կամ ես եմ տալիս առաջադրանք, կամ թույլ եմ տալիս իրենց ցանկությամբ իրենք ընտրեն, քանի որ իրենց ընտրած առաջադրանքները ավելի լավ են սովորում: Նրանց սովորածի վերջնարդյունքը պետք է պետք է լինի նյութի ընթերցելը, թարգմանելը,որոշ հարցերի պատասխանելը:

Միջին կարողությամբ խմբերի սովորածի վերջնարդյունքները պետք է լինեն նյութի վերարտադրելն ու ներկայացնելը, ինչպես բանավոր այնպես էլ գրավոր:

Բարձր կարողությամբ և առաջադիմությամբ խմբերում վերջնարդյունքը պետք է լինի վերը նշված երկու խմբերի արած աշխատանքները, և դրան ավելանում է ինքնուրույն նյութի կազմում,ներկայացում,լրացուցիչ աշխատանքներ,որոնք կարող են լինել դասագրքից,աշխատանքային նյութեր համացանցից:

Տարբերակված ուսուցման առավելությունը այն է, որ աշակերտները սովորում են և՛ իրենց խմբում, և՛ լսում ու սովորում են նաև մյուս խմբերից: Լսելով բոլոր խմբերին՝ ուսուցիչը բաց և փակ հարցերի միջոցով ընդհանրացնում է դասը ամբողջ դասարանի համար: Այնուհետև հետադարձ կապի միջոցով կապ է ստեղծում անցած և նոր դասերի միջև, որի միջոցով կրկնում և ամրապնդվում է ինչպես նոր, այնպես էլ հին կամ անցած դասը:

Տարբերակված ուսուցման ժամանակ նյութի մի քանի անգամ կրկնում են սովորողները, որի ընթացքում նույնիսկ ցածր կարողությամբ սովորողները ունենում են նվազագույն գիտելիքներ տվյալ թեմայից կամ ուսուցանվող նյութից:

Այս ուսուցման մեթոդը իրեն ավելի շատ արդարացնում է այն ժամանակ, երբ տվյալ դասարանում այս մեթոդը կիրառվել է տարրական դասարաններից սկսած:

Սովորողները միջին և ավագ դպրոց գալիս են արդեն այս մեթոդին ծանոթ և աշխատանքը տարբերակված խմբերում բերում ավելի արագ և արդյունավետ է կազմակերպվում:

2.2. Ուսուցչի դերը շերտավորված ուսուցման մեթոդի ժամանակ

Այս մեթոդի կիրառման ժամանակ շատ կարևորէ ուսուցչի դերը: Ուսուցիչը պետք է ընտրի ճիշտ խմբեր, նման գիտելիքներ, կարողություններ ու հմտություններ ունեցող աշակերտներին նույն խմբում ընդգրկելով:

Ուսուցչի մյուս կարևոր դերը այն է, որ նա հետևում է դասընթացքի ժամանակին, օգնում է նյութը հասկանալուն, պատասխանում է կարդալու ընթացքում սովորողներին անհասկանալի հարցերին, բացատրում է նոր տերմիններն ու հասկացությունները: Այս մեթոդի ժամանակ բոլոր սովորողները, ըստ էության նույն աշխատանքն են կատարում, սակայն աշխատանքը կատարվում է ըստ սովորողի կարողության մակարդակի:

Այստեղ շատ կարևոր է դասը պատմող կամ ներկայացնող աշակերտին տրվելիք հարցերը, որոնց միջոցով պարզաբանվում է նաև դասի այն մասը, որին շատ չեն անդրադարձել սկզբում:

Տարբերակված ուսուցումը ուսուցչին թույլ է տալիս բավարարել բոլոր սովորողների կարիքները, պահպանելով ցածր, միջին և բարձր կարողություններով սովորողների սպասելիքները:

Տարբերակված ուսուցման ժամանակ ուսուցիչը ավելի երկար ժամանակ է տրամադրում դասի պլանավորմանը, պահանջվում է ավելի շատ ռեսուրսներ՝ դասարանների մակերեսը, կահավորումը: Տարբերակված ուսուցման առավելությունը այն է, որ այս ձևով դասի ժամանակ նման կարողություններով սովորող երեխաները աշխատում են նույն խմբում և խմբի ներսում բոլորը հավասար են, այսինքն այդ դեպքում չկա աշակերտի լավ կամ վատ սովորելու բարդույթավորում և չկա նաև հոգեբանական արգելք: Այս մեթոդը ավելի ցանկալի է թույլ կարողությամբ աշակերտների համար:

Ճիշտ է, այս ուսուցման մեթոդը ընդունում են որպես ժամանակակից, սակայն իմ կարծիքով, այն միշտ էլ առկա է եղել դասավանդման մեջ: Բազմավաստակ և հմուտ ուսուցիչները այն ավելի շատ են կիրառում, կարող է դասարանը չեն խմբավորում, բայց դասի ընթացքում առանձին առաջադրանք են տալիս թույլ կարողությամբ կամ դասին դժվար ներգրավվող աշակերտին:

2.3 Տարբերակված ուսուցման տեսակները

Ըստ ամերիկայի մանկավարժ Քերոլ Էն Թոմիլսոնի տարբերակված ուսուցումը լինում է չորս տեսակ.

ա) ըստ բովանդակության դասակարգման

բ) ըստ գործողությունների

գ) ըստ վերջնարդյունքների

դ) ըստ միջավայրի

Տարբերակված ուսուցումն իրականացնելիս հաշվի է առնվում սովորողի պատրաստակամությունը և կարողությունները, հետաքրքրությունների շրջանակը, ուսումնառության ձևը:

Այս ամենի արդյունքում մենք կունենանք սովորողի շարունակական զարգացում, սովորողի մոտիվացիայի բարձրացում և արդյունավետության աճ գիտելիքներ ստանալու գործընթացում:

Բովանդակային դասակարգման ժամանակ հաշվի է առնվում Բլյումի տաքսոնոմիան:

Ցածր կարողությամբ սովորողները նյութը հիշեն և հասկանան ինչքան որ կկարողանան: Միջին կարողությամբ սովորողները կարողանան կիրառել և վերլուծել իրենց գիտելիքները, իսկ բարձր կարողությամբ սովորողները գնահատեն, եզրակացություն անեն սովորածից և ստեղծագործեն ու հետազոտեն:

Ըստ գործողությունների տարբերակման ժամանակ կարևոր է ուսուցչի օժանդակությունը, որը կարող է լինել հետևյալ տեսակների.

ա) ընթերցողական-դասագրքերի տրամադրում

բ) տեսողական - տրամադրել բացատրող տեսադասեր

գ) լսողական - տրամադրել աուդիո դասագրքեր

դ) կինեստետիկ – հանձնարարել առցանց առաջադրանքներ:

Ըստ վերջնարդյունքի տարբերակման ժամանակ ուսուցիչը, ելնելով սովորողի գիտելիքների մակարդակից, սովորողին հանձնարարում է կատարել այնպիսի առաջադրանքներ, որոնցում կամփոփվեն տվյալ թեմայի կամ դասի հիմնական պահանջները, դա կարող է լինել բանավոր հարցում, թեստ և այլն:

Ըստ միջավայրի տարբերակման ժամանակ ձևավորվում են խմբերը, թույլ տալ սովորողներին ցանկության դեպքում առանձին կարդալ, ստեղծել սովորելու համար հանգիստ ու անաղմուկ միջավայր: Այն խմբերը, որոնք կարող են, աշխատում են միայնակ, իսկ այն խմբերը, որոնք օգնության կարիք ունեն, պարբերաբար դիմում են ուսուցչին:

Բոլոր դեպքերում տարբերակված ուսուցման նպատակն է սովորողի շարունակական և հետագա զարգացումը՝ հիմնված նրա անձնական որակների և գիտելիքների վրա:

Սովորողը պետք է կարողանա իր ստացած գիտելիքները գործնականում կիրառել, հետազոտել ու ստեղծել ինչ որ վերջնարդյունք, որը կարելի է տեսնել, չափել և գնահատել:

Սովորողների ուսուցման հաջողությունը ուսուցման այս եղանակի ժամանակ, այն է, որ ուսուցիչը հաշվի է առնում սովորողի անհատական առանձնահատկությունները: Տարբերակված կրթությունը նպաստում է սովորողի անհատական զարգացման և գիտելիքների ձեռք բերումը այն չափով, որքանով թույլ է տալիս իր կարողություններն ու գիտելիքները:

Տարբերակված ուսուցումը ներառում է կրթության ամենակարևոր տարրը՝ հոգեբանորեն հարմար պայմանների ստեղծում: Այս դեպքում ուսուցիչը աշխատում է դասարանի բոլոր աշակերտների հետ, միջին սովորողներին հասցնելով որոշակի հմտությունների և գիտելիքների սահմանի, իսկ ուժեղ սովորողներին `էլ ավելին սովորելու ,ստեղծագործելու,հետազոտելու ,եզրակացություն անելու կարողության:

Այս դեպքում աշակերտը ինքն է դառնում սովորող և սովորեցնող, կարևոր դերում լինում է սովորողը, իսկ ուսուցիչը դառնում է օգնող ու լուսաբանող: Տարբերակված ուսուցման ժամանակ սովորողների հմտությունների չափի իմացությունը օգնում է ուսուցչին նախապատրաստվել դասին, թույլ է տալիս նախապես պլանավորել դասը ավելի արդյունավետ, ընտրել համապատասխան առաջադրանքներ և մտածել օգնության ձևեր յուրաքանչյուր խմբի համար:

Ուսուցման այս մեթոդը ուսուցչից պահանջում է մեծ աշխատանք, դասերին՝ ստեղծագործական պատրաստվածություն, տարբեր հնարքներ ու մեծ գիտելիքների պաշար: Այս բոլորի արդյունքում կարելի է հասնել ծրագրային նյութի յուրացման դրական արդյունքի: Այս մեթոդի առավելությունը կայանում է նրանում, որ գիտելիքների տարբեր մակարդակ ունեցող սովորողները սովորում են նույն

ուսումնական նյութը, ձեռք են բերում այն չափի վերջնարդյունք, ինչքան որ թույլ է տալիս իրենց կարողություններն ու հմտությունները:

3 .Փորձարարական հետազոտություն

Իմ 31 տարվա աշխատանքային փորձի ընթացքում, ես հաճախ, մտածված թե ակամա, օգտվել եմ շերտավորված կամ տարբերակված ուսուցման մեթոդից: Այս մեթոդը տեսանելի արդյունք է տալիս այն դասարաններում, որտեղ աշակերտների թիվը շատ մեծ է: Նաև այն դասարաններում, որտեղ կա աշակերտների դասերին ներգրավածության խնդիր: Ես թիրախային դասարան որպես՝ ընտրել եմ Մարտունու թիվ 2 հիմնական դպրոցի 9-րդ «բ» դասարանը (2021-2022 ուս. տարի), որտեղ սովորում են 32 աշակերտ՝ 17 աղջիկ, 15 տղա: Այս դասարանում անցկացրեցի երկու նպատակային, իրար հաջորդող դասեր:

Դասապլաններին կարող եք ծանոթանալ հավելվածում:

Դասարանի աշակերտների հիմնական մասը ներգրավված են դասապրոցեսին: Ես իմ հետազոտական աշխատանքը որոշեցի կիրառել այս դասարանում, որպեսզի բոլոր (աշակերտներ, ովքեր ուսուցանվող նյութի ներգրավվածության շուրջը ունեն ուշադրության կենտրոնացման խնդիր) աշակերտները ներգրավվեն դասապրոցեսին:

Դասարանում միջանձնային հարաբերությունները կայացած են, քանի որ փոխշփումներն ու փոխօգնության պատրաստակամությունը բավական բարձր հիմքերի վրա են դրված: Հետազոտության ժամանակ կիրառվող մեթոդը, հնարները եւ փորձերը կբարձրացնեն առարկայի հանդեպ հետաքրքրությունը եւ բոլոր աշակերտները կներգրավվեն դասապրոցեաում:

Հետազոտական աշխատանքում ներառել եմ 2 դասաժամ: Աշակերտների առաջադիմության բարձրացման ուսումնասիրությանն ուղղված մանկավարաժական հետազոտությունը իրականացվել է բնական միջավայրում, այսինքն, տվյալ հետազոտության օբյեկտն է հանդիսացել դասարանը, որում դասավանդում եմ, իսկ բուն հետազոտության հետ կապված բոլոր գործողությունները, մոտեցումները եւ մեթոդները գործածվել են անմիջականորեն տվյալ դասարանում անցկացված դասերի ընթացքում՝ բնականոն դասապրոցեսի շրջանակներում:

3.1.Փորձարարական դաս-1

Այսօրվա դասի թեման էր՝ «Ֆ.Մ.Դոստոևսկի-200» (տե'ս դասպլան-1): Դասը սկսեցի ջերմ որջույնով եւ կատարեցի աշակերտների հաշվառում: Դասաժամն սկսվեց տնային աշխատանքի ստուգումով. բոլորը ներկայացրին իրենց տնային

աշխատանքները:Քննարկվեց տնային աշխատանքի սխալները, տրվեց բանավոր հետադարձ կապ:

Քանի որ 2021թ.11.11-ին գրական աշխարհը նշել էր ռուս մեծ գրողի 200-ամյակը,վերոհիշյալ մեթոդը որոշեցի օգտագործել հենց այս թեմայի շուրջ:Առաջին հետազոտական դասի ընթացքում աշակերտները ծանոթացել են նոր ուսումնական թեմայի հետ: Ուսումնական նյութի նրկայացման արդյունքում աշակերտները պետք է յուրացնեին նոր բառապաշար, կարողանային խոսել թեմայի մեջ ամփոփված տեղեկատվության շուրջ, ինչպես նաեւ հաղորդակցվել միմյանց հետ բանավոր խոսքի միջոցով, ընդ որում ուսումնասիրված թեմայի շրջանակներում: Մատուցվող նյութը առավել պարզ եւ հեշտ յուրացնելու համար աշակերտները օգտվել են այնպիսի դիդակտիկ նյութերից, ինչպիսիք են թեմատիկ քարտեր, պարզ նկարներ ,համացանցից և այլն: Դասի նպատակն էր, բացի նյութի արդյունավետ ուսուցումը՝ զարգացնել նաեւ աշակերտների համագործակցային եւ հաղորդակցական հմտությունները եւ կարողությունները, սովորեցնել նրանց աշխատել խմբում եւ այդ միջոցով առավել բարձր արդյունքների հասնել ուսումնական գործընթացում: Աշակերտները դիտոեցին կարճ տեսաֆիլմ ,որը զգալի ակտիվություն եւ հետաքրքրություն առաջացրեց դասարանում ,գրեթե բոլոր աշակերտները հետաքրքրությամբ դիտեցին ֆիլմը եւ կարողացան որոշակի կարեւոր ինֆորմացիա դուրս բերել դիտված նյութից:Առաջադրված նպատակներին հասնելու համար առաջին դասի ընթացքում դասարանը բաժանվել է 5 խմբերի, եւ նրանցից յուրաքանչյուրին առաջադրվել է ընթերցել նոր նյութը՝ 1-Դոստոևսկին և թատրոնը,2-Դոստոևսկին և երաժշտությունը,3-Դոստոևսկին և գեղանկարչությունը,4-Դոստոևսկին և կրոնը,5-Դոստոևսկու կենսագրությունը,գ րառումներ կատարել դրա շուրջ եւ բանավոր երկխոսություններ ձեւավորել՝ ուսուցչի կողմից առաջադրված հարցադրումների հիման վրա: Խմբային աշխատանքի արդյունքում աշակերտները պետք է զույգերով ներկայացնեին յուրացված նյութը՝ բանավոր երկխոսությունների միջոցով: Ողջ ընթացքում վեր եմ հանել դասանյութի վերաբերյալ ուղղորդիչ հարցադրումներ՝ նպաստելու համար աշակերտների ակտիվացմանը: Հատուկ ուշադրություն է դարձվել զգալի պասիվ աշակերտների վրա, եւ փորձել եմ հատուկ հարցերի եւ հանձնարարությունների միջոցով առավելագույն կերպով ընդգրկել եւ ներգրավվել նրանց խմբային աշխատանքի մեջ՝3-րդ խմբին,ովքեր մասնակի են տիրապետում ռուսաց լեզվին,հանձնարարված էր պաստառի վրա նկարել նշված հերոսներին և գրել

անունները:Համակարգչի միջոցով ցուցադրեցի Ի.Գլազունովի նկարները,նշելով հերոսներին և ստեղծագիրծությունները:5-րդ խումբը ներկայացրեց կենսագրությունը,1-ին խումբը՝կապը գրականության և թատրոնի միջև:2-րդ՝պատմեցին Դոստոևսկու սիրած երաժշտության մասին,լսեցին աշակերտուհու կատարած արիան:4-րդ խումբը խոսեց կրոնի և 10 պատվիրանների մասին,քննարկեցին,վերլուծեցին:,վերջին հատվածում աշակերտներին առաջարկվել էր դիտել կարճ տեսաֆիլմ՝ ամփոփելու դասի ընթացքում ձեռք բերված գիտելիքները եւ դրանք խորացնելու համար:Աշակերտներին բառանվեցին ստեղծագործությունների ցանկեր զույգերով աշխատելու նպատակով՝ցանկից ընտրեցին Դոստոևսկու աշխատանքները:Անդրադարձ կատարելու նպատակով,առաջարկվեցին մի շարք հարցեր՝ ստուգելու համար նյութի յուրացման մակարդակը: Դասի արդյունքը ամրապնդելու եւ խմբային աշխատանքի կարողությունները ամբողջականացնելու համար աշակերտներին հանձնարարվեց տանը գրել շարադրություն ուսումնասիրված թեմայի շուրջ,օգտագործելով ուրիշի ուղղակի խոսք, որը նրանք պետք է ներկայացնեին հաջորդ դասին: Աշակերտներին խրախուսեցի դասին ակտիվորեն մասնակացելու համար եւ կատարեցի գնահատում:

Ամփոփելով առաջին հետազոտական դասի արդյունքները, նշենք, որ դասը բավականին ակտիվ անցավ, աշակրտների մեծամասնությունը զգալի կերպով հետաքրքրված էին դասապրոցեսով եւ, հատկապես, ակտիվություն ցուցաբերեցին խմբային աշխատանքների շրջանակներում: Յուրաքանչյուր աշակերտ փորձում էի իր ունակությունների սահմաններում մասնակցել դասին, կատարել հանձնարարությունները եւ դրական արդյունք ապահովել իր խմբի համար:Հատկապես ակտիվ էին զույգերով աշխատանքի ժամանակ:

3.2**Փորձարարական դաս-2**

Այսօրվա դասի թեման էր «Ուղղակի խոսքի փոխակերպումը անուղակի խոսքով»(տե'ս դասպլան-2): Երկրորդ հետազոտական դասի ընթացքում շարունակվեց նախորդ դասի ռազմավարությունը՝ կիրառելով տարբերակված ուսուցման սկզբունքը աշակերտների ներգրավվածությունը ապահովելու համար: Այս դասի նպատակն էր աշակրտներին ծանոթացնել նոր ուսումնական թեմային ,կապել գրականության դասը շեզվի դասի հետ,համապատասխան նոր

բառապաշարի հետ, որը նրանք կարող են անկաշկանդ օգտագործել իրենց բանավոր խոսքում:

Դասի ընթացքում շարունակվել է խառը խմբերով աշխատելու սկզբունքը, որը նախորդ դասի ընթացքում բավականին մեծ դրական արդյունքի բերեց: Եթե նախորդ դասին խմբերը ընտրված էին ըստ կարողությունների,ապա այս դասին դասարանը բաժանվել էր խառը խմբերի, որոնց մեջ ներգրավված են եղել ինչպես բարձր, այնպես էլ ցածր եւ միջին առաջադիմությամբ աշակերտներ, ընդ որում բարձր առաջադիմություն ունեցող աշակերտները գործնական աշխատանքի ընթացքում պետք է օգնեին եւ ուղղորդեին նաեւ ցածր եւ միջին առաջադիմությամբ երեխաներին: Դասի ընթացքում խմբերը դիտեցին կարճ տեսաֆիլմ ուսումնասիրվող թեմայի շուրջ՝բացատրվեց «Ուղղակի խոսքի փոխակերպումը անուղակի խոսքով», որից հետո նրանցից յուրաքանչյուրին տրվեց աշխատանքային թերթիկ՝ համապատասխան հանձնարարություններով՝հատվածներ Դոստոևսկու ստեղծագործություններից: Նաև աշակերտներին հանձնարարվել էր կարդալ ներկայացված դասի տեքստի մի հատված եւ ներկայացնել իրենց նախընտրած տարբերակով: Խմբի յուրաքանչյուր անդամ պետք է մասնակցեր աշխատանքին եւ իր բաժինը ներկայացներ խմբային աշխատանքի արդյունքում:Գրատախտակի վրա գրվեցին փոխակերպման օրինակներ,կետադրեցին,արտագրեցին տետրերում:

Խմբային աշխատանքից հետո արտահայտվեց ուսուցիչ-աշակերտ հարց-պատասխան սկզբունքով կազմակերպված քննարկման արդյունքում: Խմբային աշխատանքի ընթացքում ևս նկատվեց զգալի ակտիվություն եւ լարվածության աստիճանաբար պակասում որոշ աշակերտների մոտ: Ծատերը առավել ակտիվ եւ անկաշկանդ էին կարողանում աշխատել խմբի մյուս անդամների հետ՝ հասկանալով եւ գիտակցելով պատասխանատվության իրենց բաժինը:Ընդհանուր առմամբ, խմբերը բավականին լավ հանդես եկան, կարողացան միասնական աշխատանքի արդյունքում արժանանալ բարձր գնահատականի, սովորեցին օգնել միմյանց եւ համագործակցել: Հետազոտական դասի արդյուքներով ստացվեց հետեւյալ պատկերը՝ որ մի աշակերտ անմասն չմնաց ընդհանուր աշխատանքից եւ ցուցաբերեց որոշակի ակտիվություն, ընդ որում այն աշակերտները, ովքեր հարաբերական պասիվ էին, արդեն այս դասաժամի ընթացքում բավականին ակտիվ եւ հետաքրքրված էին, ուղղորդվում էին խմբի մյուս անդամների կողմից, ինչի շնորհիվ նրանց հաջողվեց հասնել արդյունքի՝ հանձնարարությունների կատարման ժամանակ:

4.Վերլուծություն

Ուսուցչի արդյունավետ աշխատանքի նախապայմաններից մեկը ուսուցման բազմազան միջոցներին տիրապետելն է: Որպես հետազոտության օբյեկտ ընտրվել էր 9-րդ դասարանը: Հետազոտության շրջանակում կատարեցի տարբերակված ուսուցման մեթոդով երկու դասաժամ:

Տարբերակված ուսուցման մեթոդը երեխային մղում է ուշադիր լինել եւ լավ սովորել,նրան մասնակից դարձնելով գիտելիքի ձեռքբերմանը:

Խմբային աշխատանքի եւ համագործակցության սկզբունքի կիրառումը դասապրոցեսում զգալի կերպով օժանդակում է աշակերտների ներգրավվածության մակարդակի բարձրացմանը, քանի որ խմբերի ներսում աշխատելիս աշակերետները շատ ավելի ուշադիր եւ հետաքրքրված են աշխատում՝ գիտակցելով սեփական կարեւորությունը խմբի համար: Հետազոտական դասերի արդյունքում հաջողվեց հասնել հետազոտության սկզբում առաջադրված նպատակին՝ խթանել աշակերտների ներգրավվածության մակարդակի բարձրացմանը՝ կիրառելով համագործակցուքյան սկզբունքը: Ընդ որում, շեշտադրվում էր համագործակցությունը ինչպես աշակերտների եւ իմ, այնպես էլ հենց աշակերտների միջեւ: Այդ նպատակով դասերի ընթացքում փորձարկվեցին տարբեր համագործակցային եւ ակտիվություն խթանող եղանակներ, մասնավորապես՝ հարցպատասխան սկզբունքը, քննարկումներ կազմակերպելու սկզբունքը, տեսաֆիլմեր եւ թեմատիկ տեսահոլովակներ դիտելու սկզբունքը: Բոլոր կիրառված մեթոդները հնարավորություն տվեցին արդյունավետ կերպով ազդել աշակերտների ներգրավվածության վրա, ակտիվություն հաղորդեցին աշակերտների ուսումնական գործունեությանը:

Այսպիսով, աշակերտների՝ դասապրոցեսում ներգրավվածության խնդիրը կարեւոր գործոն է ուսումնական գործընթացի արդյունավետությունը եւ նպատակաուղղվածությունը ապահովելու համար: Եվ այս պարագայում շատ կարեւոր գործոն է հանդիսանում ոչ միայն աշակերտների անձնային հատկությունները եւ որակները, որքան հենց ուսուցչի նպատակաուղղված գործունեությունը, հատուկ մանկավարժական մեթոդների կիրառությունը, որոնք արդյունավետ կերպով կարող են խթանել դասարանում աշակերտների ակտիվությունը դասերի ժամանակ, էլ ավելի ամրապնդել ակտիվ աշակերտների առաջընթաց ուսումը, ինչպես նաեւ հիմքեր ապահովել թույլ եւ մոտիվացիայի

պակաս ունեցող աշակերտների ուսումնական գործունեությունը: Տվյալ հետազոտության ընթացքում փորձարկվեց խմբային աշխատանքի կիրառման սկզբունքը՝ համագործակցային մեթոդի հիման վրա, որը ենթադրում էր ակտիվ հաղորդակցություն ինչպես աշակերտ-ուսուցիչ ուղղությամբ, այնպես էլ աշակերտ-աշակերտ հարթակում: Հաջողվեց զգալի դրական արդյունքների հասնել աշակերտների ակտիվության եւ ներգրավվածության գործում՝ կիրառելով թեմատիկ պաստառներ եւ քարտային նյութեր, աշակրտներին տեսաֆիլմեր և թեմատիկ տեսահոլովակներ ցուցադրելով: Այսպիսի միջոցների կիրառումը՝ ակտիվ եւ հետաքրքրաշարժ քննարկումների, առաջադրանքների եւ հանձնարարությունների ուղղորդմամբ, նպաստեցին դասարանի աշակերտների ակտիվության խթանմանը: Նրանք առավել մեծ ուշադրությամնբ եւ հետաքրքրությամբ էին հետեւում դասի ընթացքին, ձեռք էին բերում նոր գիտելիքներ եւ առաջարկված հանձնարարությունների շնորհիվ կարողանում էին մտապահել եւ ամրապնդել ստացված գիտելիքները: Խմբային աշխատանքը նույնպես շատ մեծ խթան հանդիսացավ աշակերտների ակտիվության ձեւավորման համար, քանի որ յուրաքանչյուր աշակերտ, նույնիսկ ամենաթույլ եւ մոտիվացիայի պակաս ունեցողը, կարողացավ ներգրավվել խմբային աշխատանքին համագործակցային սկզբունքների կիրառման շնորհիվ:

Վերլուծելով ուսուցման տեսության եւ պրակտիկայում տարբերակված ուսուցման մեթոդների օգտագործման խնդրի վիճակը, մենք կարող ենք եզրակացնել, որ շերտավորված ուսուցման փորձը և այդ ուղղությամբ կատարած հետազոտությունների արդյունքները հաստատել են, որ որևէ առարկայի խոր ուսումնասիրությունը աշակերտների գիտելիքները հարստացնում է ոչ միայն տվյալ և հարակից առարկաներից, այլև մյուս առարկաներից ու զգալիորեն բարձրացնում է ուսման առաջադիմությունն ընդհանրապես:

Շերտավորված ուսուցումը խթանում է սովորողների մեջ նոր հետաքրքրություններ ու նախասիրություններ: Ուսուցման այս ձևի հիմքը կազմում է անհատական ուսուցումը: Այն պահանջում է ուշադիր լինել և՛ թույլ գիտելիք ու կարողություն ունեցող սովորողի, և բարձր մակարդակի սովորողի գիտելիքները է՛լ ավելի բարձրացնելուն:

Տարբերակված ուսուցման ժամանակ ուսուցիչը հասկանում է, որ բոլոր աշակերտները տարբեր են և պահանջում են տարբեր ուսուցման մեթոդներ, որպեսզի հաջողություն լինի ուսուցման մեջ: Այս ուսուցման մեթոդի նպատակն է

դասավանման տարբեր հնարքների կիրառում, բայց նույն վերջնարդյունքի ստացում: Ինչպիսի մեթոդ, հնար և ուսուցման ձև էլ օգտագործվի ուսուցման ժամանակ, ուսուցիչը հաջողության կհասնի միայն այն դեպքում, երբ անցկացրած դասը հետաքրքիր ու բովանդակալից կլինի դասարանի բոլոր աշակերտների համար: Իսկ դասը հետաքրքիր ու մոտիվացնող կլինի, եթե յուրաքանչյուր սովորողի կամ խմբի համար ուսուցիչը ընտրի ճիշտ առաջադրանք:

Եթե խնդիրը ճիշտ ձևակերպենք և տանք ճիշտ նպատակադրումներ, իմ կարծիքով, աշակերտների խմբերում և ընդհանրապես դասարաններում անպայման դրական տեղաշարժ կունենանք:

4.1 Գրականություն ցանկ

1. Ա.Նալչաջյան «Հոգեբանական բառարան», Երևան, 1984:
2. Լ. Ասատրյան «Մանկավարժական հոդվածներ»:
3. Յու. Ա. Ամիրջանյան, Ա.Ս. Սահակյան «Մանկավարժություն», Երևան, 2005:

5. Հավելված

5.1 Դասապլան 1

Առարկա՝ Ռուսաց լեզու. 12.11.2021թ. I կիսամյակ, 9-րդ դասարան

Դասապլանի կազմը՝ 17 աղջիկ, 15 տղա

Թեմա՝Ֆ.Մ.Դոստոևսկի-200

Օգտագործվող նյութեր՝ Հանրագիտարան,նյութեր համացանցից, կավիճ, գրատախտակ, տետր, դասագիրք, գրողի ստեղծագործություններ,համաֆարգիչ,պաստառներ, գրքերի ցանկ,նկարներ

Դասի նպատակը՝ Ծանոթանալ ռուս մեծ գրողի կենսագրության,ստեղծագործությունների հետ, առաջացնել հետաքրքրություն ռուս գրականության հանդեպ,բանավոր խոսքի զարգացում

Վերջնարդյունքը՝ սովորողը կարողանա.

կարդալ,պատմել գրողի կենսագրությունը,թարգմանել տրված նախադասությունը,տրված նյութը պատմել ռուսերենով,վերլուծել,մեկնաբանել,հայտնել կարծիքը

Գործողություններ (ժամ/տևողություն)	աշակերտ	ուսուցիչ	հարցադրումներ
5 րոպե	Ներկայացնել անցած տնային աշխատանքը	Ողջունել, հաշվառել, ստուգել տնային աշխատանքները	1)Ով է Դոստոևսկին:

15 րոպե	Նախապես բաժանված խմբերով աշխատում են, ծանոթանում են նյութին և պատրաստվում են այն ներկայացնել: Տարբերակված ուսուցման ցածր առաջադիմությամբ որոշ աշակերտների հետ:	Նոր հասկացությունների և տերմինների բացատրում: Խմբերի կազմում, աշխատանքային նյութերի տրամադրում: 1-Դոստոևսկին և թատրոնը,2-Դոստոևսկին և երաժշտությունը,3-Դոստոևսկիկ և գեղանկարչությունը,4-Դոստոևսկին և կրոնը,5-Դոստոևսկու կենսագրությունը: Բացատրում է հանձնարարությունները:	2) Ո՞րոնք են գրողի ստեղծագործությունները,որոնք ոչ: 3)Գրական աշխարհի ի՞նչ 2 բևեռ կարելի է առանձնացնել գրողի մոտ(անսահման սեր թե դաժան ատելություն): 4)Ցանկանու՞մ եք կարդալ Դոստոևսկուն Ի.Գլազունովի նկարները դիտելուց հետո:

20 րոպե	Ցածր առաջադիմությամբ թիրախավորված աշակերտներից մի քանիսը հարցերի միջոցով պատասխանում են դասը: Մնացած խմբերից մեկական աշակերտ ներկայացնում է իրենց նյութը, եթե անհրաժեշտ է, մնացածը կատարում են լրացումներ:Աշխատում են նաև զույգերով	Մուտքի խոսք:Շրջում է խմբերով և լսում է դասը ներկայացնողին, տալիս է հարցեր ամբողջ դասարանին, ընդհանրացնում է նյութը: Տալիս է միավորային գնահատականներ:	

5 րոպե – տնային աշխատանքի հանձնարարում և բացատրում է՝(գրել շարադրություն օգտագործելովուրիշի ուղղակի խոսք)

5.2 Դասապլան 2

Առարկա՝ Ռուսաց լեզու

Ամսաթիվ՝ 15.11.2021թ.

Կիսամյակ՝ I

Դասարան՝ 9

Թեմա՝ Ուղղակի խոսքի փոխակերպումը անուղակի խոսքով

Օգտագործվող նյութեր՝ Դասագիրք,կավիճ, գրատախտակ, տետր, քարտեր

Դասի նպատակը՝ Սովորողը պետք է իմանա.

- Ինչ է ուղղակի խոսքը
- Ուղղակի խոսքի կետադրիություն
- Օգտագործի իմացաղ կանոնը բանավոր և գրավոր խոսքում
- Կազմել նախադասություններ

Դասի վերջնարդյունքը՝ սովորողը պետք է կարողանա.Ինչ է ուղղակի խոսքը

- Ուղղակի խոսքի կետադրություն
- Օգտագործի իմացած կանոնը բանավոր և գրավոր խոսքում
- Կազմել նախադասություններ

Գործողություններ (ժամ/տևողություն)	աշակերտ	ուսուցիչ	հարցադրումներ
5 րոպե	Ներկայացնել անցած դասի տնային աշխատանքը, եթե ունեն հարցեր դիմեն ուսուցչին:	Մուտք, ողջունել, հաշվառել, ստուգել տնային աշխատանքները, հարցնել նոր դասի էջը:	1)Տարբերում եք՞ ուրիշի ուղղակի խոսքը անուղղակի խոսքից:

15 րոպե	Խմբերի բաժանվել, ստանալ աշխատանքային հանձնարարությունները և աշխատել դրանց վրա: Եթե ընթացքում հարց կունենան դիմեն ուսուցչին:	Տարբերակել խմբերը, տալ հանձնարարություն դասագրքից: Շրջել դասարանում, հետևել դասի ընթացքին, պատասխանել աշակերտների հարցերին:	2)Ինչպես ենք կետադրում՞: 3) Ի՞նչ նախադասություն ենք ստանում ուրիշի ուղղակի խոսքը փոխակերպելուց հետո։4)Կարո՞ղ եք շարահյուսորեն վերլուծել այն:
20 րոպե	Դասի ներկայացնելը սկսել այն խմբից, որը թիրախային է համարվում, այսինքն թույլ կարողությամբ և Հետո ամեն խմբից մեկը մոտենում է գրատախտակին և ներկայացնում է դասը:	Սկսել հարցումները: Լսել դասը պատմողներին, տալ հետադարձ և ամրապնդող հարցեր: Ամփոփել դասը, տալ միավորային գնահատականներ, թիրախային խմբերի աշակերտներին նաև խրախուսական գնահատական:	
5 րոպե	Ստանան տնային հանձնարարություն,	Բացատրում և հանձնարարում է տնային աշխատանքը:	

5. Գրականություն

4. Ա.Նալչաջյան «Հոգեբանական բառարան», Երևան, 1984:
5. Լ. Ասատրյան «Մանկավարժական հոդվածներ»:
6. Յու. Ա. Ամիրջանյան, Ա.Ս. Սահակյան «Մանկավարժություն», Երևան, 2005: